Պատմության դասերը
Վ.Դավթյանի պոեզիայում

Մ. Ա. Խաչատրյան

Տվյալ աշխատանքում դիտարկվում են Վ.Դավթյանի պատմական թեմատիկայով ստեղծված ծավալուն գործերը: Փիլիսոփայում վերլուծվել և գնահատվել են անվանի բանաստեղծի «Հայերգություն», «Ո՞ւ տայր ինձ գծուխ ծխանի», «Ընդմակ ձիավորը», «Ծխարձնոց», «Ասա Մաշտոցի մասին», «Լրտեսաս», «Գիշերային գրուց Նարեկացու հետ», «Մոմիկը» պոեմները ու ասքերը, «Թոնդրակեցիներ» և «Տիրանի ծառ» չափածո դրամաները: Ուշադրության կենտրոնում է եղել քննարկվող երկերի գաղափարական բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների արժեքավորումը:

Վ.Դավթյանն իր «Պատմության խորհուրդը» հոդվածում գրել է. «Եվ ի՞նչ է հուշում, ավելին, ի՞նչ է հրամայում մեզ պատմության խորհուրդը, ամենից առաջ դասեր քաղել այդ պատմությունից և ապա՝ նայել առաջ»[1]: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ նրա ստեղծագործության մի զգալի մասը կազմում են պոեմներն ու ասքերը, պատմական թեմայով գրված գափաշո դրամաները: Այս առումով ուշադրավենցյան շրջանի էպիկական շունչ ունեցող պոեմների շարքում նրան կարելի է համարել առաջիններից մեկը: Հայ ժողովրդի պատմության ինչպես՝ հերոսական, ՝ ողբերգական դրվագները միշտ նեղել են Դավթյանի տենսադաշտում: Ժամանակին գրականագետ Ս.Սողոմոնյանը նկատել է. «Հայ ժողովրդի պատմությանը դիմելով, Վ.Դավթյանը երգում է հատկապես նրա հերոսական կողմը, նրա պայքարը օտար գավթիչների դեմ, նրա ազատասիրությունն ու անկախության ձգտումը, որը համարում է նրա կենսունակության հիմնական աղբյուրներից մեկը»:[2] Պատմության գեղարվեստական ընկալման և դավթյանական եզրերը գնահատելու համար հետաքրքիր է նրա «Հայերգություն» ասքը, որտեղ կարդում ենք.

Հայաստան աշխարհ,
Ինչպե՞ս ապրեցիր
Այդ մի բուռ ջրով ու մի լուրջ ծաղկով:
Եվ ինչպե՞ս եղավ,
Որ գլխիդ վրա խշխշում է դեռ
Կանաչից, աստղից ու քամուց հյուսված
Մենավոր բարդին... :[3]

(«Հայերգություն»):

Բանաստեղծը Մենավոր բարդու շուքի տակ, փրկված Հայոց հողակտորին հենվելով՝ հոգու լուսարձակով գնում է հնամյա մեր ժողովրդի անցյալը, ձգտում գտնել մեր դժվար երթի գաղտնիքները ու գույները, բացահայտել հոգեբանական այն առանձնահատկությունները, որ բնութագրական են մեր ազգին երեկ և այսօր: Ժողովրդի գոյատևման խորին խորհրդի և ճակատագրի արձարձումներով Դավթյանը բերում է իր խոսքը՝ ավելի շատ ասքային հնչերանգներով:

Պատմական եղելությունների, իրադարձությունների, անձնավորությունների նկարագրությունը բանաստեղծի երկերում ծփանք է տալիս առասպելական - հեքիաթային - ասքային պատումների շրջանակներում: Իսկ դա քիտում է մեր ժողովրդի դժվարին ճանապարհի, նրա կրած տառապանքների և դրանց հաղթահարման գիտակցումից: Բանաստեղծն ինքն էլ բնութագրում երկիրը Հայոց. «Ճակատագիր ես, Որ մրուրի մեջ թաթախված շանթն է շառաչով գրել Եվ սրբագրել տառապանքն ինքը...»:

Վ.Դավթյանը բացում է Հայաստանի մագաղաթյա մատյանը, այնտեղ տեսնում «Բիրտ խռովքների ու քնշանքների Անվերջանալի ալեբախություն», «Բարբարոս բարբաքոով ու գոված հնչյուն»-ով կարդում աստղալույսերի և արշալույսների ներշնչումները: Նա գալիս է այն եզրակացության, որ մայր երկիրը իր կարծրությունը դրել է հայոց ցեղի երազներում և արարել աղբյուրների լույսը: Ահա այդ մաքառման և գոյատևման ավիշն էլ հենց թելադրում է բանաստեղծին նարեկացիական հսկադիր քնութագրումներով ստեղծել ժողովրդի անցած ճանապարհի պատկերը.

Դու՝ խոնարհ աղոթք,
Բայց նաև՝ արծվի ահեղ կռնչյուն,
Դու՝ վանքի զանգակ ու ռազմի դու փող,
Դու՝ վիհի անկում, գագաթի ներբող,
Դու՝ ներման թավիշ, վրեժի եղջյուր,
Դու՝ խաղաղ կրակ, մոլեգնած դու ջուր,
Դու՝ սիրո ծաղիկ ու վայրի տատասկ,
Դու՝ լեղի որով, կաթնահամ դու հասկ,
Նարեկա վանքի քարե հրթիռով
Առ Աստված միտող դու Նարեկացի
Եվ աստծո կոչը զանգատով խրվող
Ահեղ գատումը ֆրիկյան կայծի...
Եվ դու տառապանք,
Որ ծանր է որպես կռանը՝ սալին... :[1]

(«Հայերգություն»):

Երկիրը բանաստեղծին կտակել է. «ցավը պարտության»: Բայց դարերի բարձունքից թնարական հերոսը դարձյալ «Թաքուն գանգատով ու... գոհությամբ» հայրենիքը համարում է իր բախտը, հավատը, գոյությունը:

Վ.Դավթյանի պատկերներում Հայաստան աշխարհը Արա Գեղեցիկ է և հրեղեն սյուն: Հրեղեն ու ոգեղեն պատկերներում բանաստեղծը ներկայացնում է հայրենիքի և ժողովրդի կենսագրությունը՝ ժամանակակից երևույթների հոլովումով ու լուծումով: Դավթյանը իր ասքերի հենքերը գտնում է մեր պատմիչների երկերում և ժողովրդական ավանդություններում: Արա Գեղեցիկը, Արտավազդը, Մ.Մաշտոցը, Վարդան Զորավարը, Գրիգոր Նարեկացին և այլ հսկաներ բանաստեղծի ստեղծած պատկերատարահում լեզու առած խոսում և խոր-

---

[1] Վ.Դավթյան «Զուգահեռ ճանապարհ», էջ 402.

[2] Ս.Սողոմոնյան, «Ժամանակակից հայ բանաստեղծներ», հ.1, «Հայաստան», 1965, էջ 503:

[3] Վ.Դավթյան, «Ասք սիրո», «Սովետական գրող», 1982, էջ 277.

[1] Նույն տեղում, էջ 282

հուրդներ են տալիս նոր սերունդներին: Դավթյանի պատումներում անմիջականությունն ու ոգեղեն շունչը ուղղակի տաք արյուն են հաղորդում Հայրենիք - պատկերին: Հայաստանը անձնավորվում է անցյալի և ներկայի զգացողությամբ: Շրջանցելով պատմության փաստագրական սահմանների գայթակղությունը՝ Դավթյանն ավելի շատ բացահայտում է մեր ժողովրդի հոգեբանությունը, ազգային բնավորության գծերը: Հայրենասիրության զգացումը բանաստեղծը միագիծ չի ներկայացնում: Նա ստեղծում է հերոսի ամբողջական կերպարը: Նրա հերոսները ազատասեր են, անգիջում, վեհանձն, պատվասեր, հայրենիքի և ժողովրդի սիրտ և ընտանիքի անձնուրաց պաշտպաններ: Ձեռք մեկնելով մեր առասպելներին, Վ.Դավթյանը դարերի խորքից փնջում է ժողովրդի հայրենասիրական զգացումները՝ պատմական անձնավորությունների միջոցով: Այդ առումով հատկանշական է »Ո՜, տայր ինձ զծուլս ծխանի« ասքը: Օգտվելով էպոսային պատումների ժանրային և լեզվական միջոցների առանձնահատկություններից, Դավթյանը Արտավազդի կերպարին մի կողմից հաղորդել է հոգեղեն գեղեցկություն, մյուս կողմից՝ ոգեղեն աստվածային երանգներ: Պատմությունից առնելով Արտավազդ Երկրորդի գործունեության, հռոմեական գավթիչների դեմ մղած նրա պայքարի, նենգ Անտոնիոսի կողմից գերեվարվելու փաստերը, Դավթյանը ընդգծել է հայրենական ծխահի արարչական ուժը՝ որպես հարատևման աղբյուր: Գերված Արտավազդ թագավորի անկոտրում կամքը, Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի առջև չխոնարհվելու նրա վճռականությունը, ազգային հպարտության զգացումը բանաստեղծը արծարծել է պատկերային թարմ ու կոլորիտային հնարանքներով: Ասքի մեջ բանաստեղծի գեղագիտական իդեալի դիրքերից մտորում է Արտավազդն ինքը՝ Անտոնիոսին որակելով որպես գող, չար, շողոքորթ, թծնող ավազակ: Արտավազդը մերհիշում է, թե ինչպես Անտոնիոսը Հայաստան եկավ «եղբայրության երդմամբ, ընծաներով...», և ինքը որպես գիմվոր ու մարդ՝ հավատաց նրան ու գնաց վրանը և առանգվեց: Արտավազդը չի հաշտվում այն մտքի հետ, որ «նվաճված է...Հայաստանը»: Գերված Արտավազդ թագավորը Նեղոսի ափին հիշում է ժողովրդական տոնախմբությունները, մտքի թևերով փարվում է Արարատին: Արտավազդի արտաքին և ներքին հոգեկան գեղեցկությունների մեջ բանաստեղծը խտացրել է հայկական առասպելական դյուցազունների բարեմասնությունները: Նա չի խոնարհվում Կլեոպատրային, ինչպես Արան՝ Շամիրամին: Եվ յուրաքանչյուր անգամ Եգիպտոսի թագուհու՝ «Հռոմների ծախու հոմանուհու» կնոջ հորդորներին պատասխանում է վեհ ու հպարտ. «Կլեոպատրա, գեղեցկությունդ մարմնավոր Բազմապատկիր քո հոգևոր գեղեցկությամբ Եվ տուր ինձ ծուլսն իմ ծխանի...»:

Արտավազդը պատրաստ է քայլել դեպի կառափնարան, բայց նրբեք չխոնարհվել թշնամու առջև Նրա հպարտության և վճռականության ավիշը հայրենիքից է ակունքվում: Նրա խոհերում, կարոտի ծփանքներում նույն երազն է հնչում.

Ո՜ տայր, ո՜ տայր ինձ ծխանիս ծուլսը սուրբ
Ո՜ տայր առավոտը նավաստարյան,
Եղնիկների վարգը հայոց լեռներն ի վեր,
Ու նոջերվաց վարգը ծորերն ի վար
Ո՜ տայր, ո՜ տայր ինձ,
Ո՜ տայր Արտաշատի ոսկեփոշի ճամփան,
Հնձանների բուրմունքն ու փշատի փոշին,
Ո՜ տայր թոնիրների բուրմունքը սուրբ,
Ո՜ տայր, ո՜ տայր...[1]

(«Ո՜ տայր ինձ զծուլս ծխանի»):

Տեղին է բերել գրականագետի ճշմարիտ դիտարկումը այդ ասիթով. «Ո՜ տայր ինձ զծուլս ծխանի...«, - սա հայրենիքի կարոտի առաջին կանչն է, որ հետո դարեդար պիտի հնչեր մեր պատմության վրա»:[1]

Չորրորդ դարի պատմական իրադարձությունների դավթյանական գեղարվեստական ընկալումները նոր, ավելի լայն ընդգրկումներով բացահայտվեցին «Ճերմակ ձիավորը» ասքում: Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» առնելով թեման, Վ. Դավթյանը պատմության հնոաբբրիր սկզբունքներով թարմացրեց վիպական այդ դրվագը՝ հաղորդելով նրան արդիական հնչեղություն: Այս ասքը ևս մեր անցյալի հերոսական ավանդների հանդեպ բանաստեղծի ունեցած լայնախոհ հայացքի արդյունք է: Խորապես իմանալով չորրորդ դարի քաղաքական, կենցաղային և բարոյական խմորումները, Վ.Դավթյանը չափածո խոսքի հնարավորությունների սահմաններում և՝ հեռվում է Փ. Բուզանդի մեկնաբանությանը, և՝ իրենն է բերում ասքի մեջ: Արշակ Երկրորդի, Շապուհ Արքայի, Վասակ Մամիկոնյանի և նրա որդու՝ Մուշեղի շուրջ ստեղծված ավանդապատումի հիմքում խոսում է պատմական ճշմարտությունը: Դավթյանը այդ հիման վրա ստեղծել է գեղարվեստական մի նոր իրականություն, մի նոր պատում՝ իր խորհրդավոր լուսաբանումով: Բանաստեղծը առաջին հերթին ընդգծում է հայ ժողովրդին հատուկ անձնուրաց հայրենասիրության և վեհանձնության գաղափարը: Ասքի սյուժետային հիմնական գիծ ընտրելով ժողովրդի քաղաքական մաքառման երևույթը, նա իր երկում ցույց է տալիս կերպարների հերոսությունն ու ծանր ճակատագիրը: Ասքը սկսվում է գույժով. «Շապուհն է նորից Հայաստան սողում իբրև վիշապ օձ...»: Արևելյան-պատկերային հյուսվածքի մեջ երևում է Շապուհ արքայի «ածույզը բեց», «շեկ առյուծը... բոցին դրոշի», որ գալիս է ժանիքները մլրտնելու Հայոց աշխարհի ոդին ու կոդին: Գոռոզ Շապուհի հուշ-խոհերում ներկայացվում են նրա գործած դաժանությունները Ար-

[1] Վ.Դավթյան, «Ծուլս ծխանի», «Հայաստան», 1969, էջ 25:
[1] Դ.Գասպարյան, «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը», «Լույս», 1990, էջ 350

շակ թագավորի, Վասակ Մամիկոնյանի, Փառանձեմի, ամբողջությամբ Հայաստանի հանդեպ:

Պարսիկ բռնապետին հակադրվում է հայ ժողովրդի խղճի, ազնվության, վեհանձնության խտացում հանդիսացող Մուշեղ Մամիկոնյանը: Մուշեղի բնավորության այդ առինքնող գծերը մեծապես առնչվում են հայրենիքի փրկության գաղափարին: Ասքի առաջին մասում հանդես եկող գոռոզ ու չար Շապուհին երկրորդ մասում հակադրվում է Մուշեղը: Շապուհի նժույգը՝ բոց, Մուշեղի նժույգը՝ կապույտի մեջ ցոլացող «ալիտակ կրակ»: Կարմիրի և Սպիտակի հակադիր այս այլաբերության ծավալվող ծփանքներում ընդգծվում են Մուշեղի վրիժառության անհրաժեշտությունն ու վեհանձնությունը: Դավթյանը այդ զգացումների հենքերը ագուցում է հայրենի երկրին, ոգը և՝ հայ մարդու, և՝ իր սուրբ հողի միասնության խորհրդանիշ է նշանակում.

Հայոց աշխարհի ծորերը բիրտ են ու վայրիվերս,
/Արարման պահին գլխապտույտ է ունեցել աստված/,
Հայոց աշխարհի ծորերը սողում, դառնում են վիհեր,
Եվ վիհերն՝ անդունդ:
Անդունդների մեջ
Թնդյուն կա ու մութ,
Անդունդների մեջ
Հովագների պես որսին հետամուտ
Գետեր կան սահեղ՝
Փրփուրը կախված երախներն ի վար:
Գետերն այդ ոխով թռչում քարե-քար
Վեմ են տապալում,
Որձաքար հալում,
Ծունկերն են ծալում
Այրուժների... :[1]

(»Ճերմակ ձիավորը«):

Եվ այն պահին, երբ «Շապուհի զորքը Հայոց ձորերում ձգվել ընդերկար ու գալար-գալար առաջ» էր սողում, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի «մերկ սուրն է շողում, օծված աստղերի շողակաթ լույսով» և հնչում է փրկարար կոչը. «-Ի զե՞ն, հայորդիք, հանուն Վասակա, Զարդենք այս անգամ մեջքը վիշապի»: Մուշեղ Մամիկոնյանին հուզում է Հայոց թագավորի և սպարապետի մահվան վրեժի հատուցումը, հայրենիքի պատվի փրկությունը: Դավթյանը իր այս կերպարին հաղորդում է մարդկային ամենավեհ ապրումները՝ երկու սուրբ զգացումների՝ հայրենասիրության և վեհանձնության համաձուլվածքով: Զարդելով պարսկական հրոսակներին և փախուստի մատնելով Շապուհին, Մուշեղը ազատ է արձակում նրա սկյութուհի, ասորուհի, եթովպուհի, վրացուհի, քուշանուհի, հելլենուհի և այլ ազգերի ներկայացուցիչ կանանց:

Մուշեղ Մամիկոնյանի այս արարքը տարեգրվում է հայոց մատյաններում, իսկ Շապուհ արքան հրաման է արձակում, «Որ իր ոսկեձույլ գինու գավաթին նկարեն պատկերն սպարապետի, նկարեն ճերմակ նժույգի վրա...»:Սակայն պատուհասի այս ավարտով չի լուծվում Դավթյանի ասքի գաղափարը: Նա խորապես հասկացել է, որ Հայոց բաջն սպարապետի վեհանձն արարքը նպատակամղված է եղել մարդկային բնավորության մեղմացմանը, ժողովուրդների մտերմության հաստատմանը: Այդ է վկայում ասքի ընդհանրացումը.

Եվ խոսք են խոսում, թե ետ այնորիկ
Մեղմացավ բարքը գազան Շապուհի,
Ու մի սակավիկ
Շատացավ բարին աշխարհի վրա.[2]

Վ. Դավթյանի հայրենապատումի մեջ մի ամբողջական շարք են կազմում «Զվարթոնց», «Ասք Մաշտոցի մասին», «Կոմիտաս» պատմական պոեմասքերը, «Ծիրանի ծառ» դրաման, Հայոց մեծ եղեռնի ողբերգությունը պատկերող «Ռեքվիեմը»: Բանիաստեղծը նրանցում ստեղծել է հայրենասերների մնայուն կերպարներ, որոնք իրենց ժամանակաշրջանի խիղճն ու ձայնը լինելով հանդերձ, հանդես են գալիս որպես դաս ու օրինակ աշխարհ եկող սերունդների համար: Հայրենիքի, նրա ուժի և պատվի խորհրդանիշ Արարատը բոլոր դեպքերում պատկերվում է ոչ միայն որպես հայ ժողովրդի պատմական ընթացքն ապահովող կենտրոնանձիգ հսկա, այլև սերունդների հոգևկան գնոնցկությունն ու բարոյական կենցվածքն ապահովող նահապետ: Բանաստեղծը այդ մղումով արեգակի առաջին շողի ջերմությունը նվիրում է Ազատն Մասսի ձյունին և ապա՝ Արծվի թևերին ու կոպին, որից հետո արծիվը պոկվում է տեղից ու սուրում Ազատ Մասիսն ի վեր: Արծվի թռիչքին հետևում է Ճարտարապետ Հովնանը և գտնում Մասսի ու արծվի դաշնությունը.

Եվ Հովնանի հանդեպ որմ է ելնում կարծես,
Քար է դրվում քարի,
Քար է դրվում քարի,
Եվ խարսխի վրա սյուն է դրվում միատող,
Եվ սյունների վրա արծիվները միտող
Վսեմ գմբեթներն իրենց բաց թևերին առնում,
Սավառնում են,
Ելնում
Ու տանում են դեպի արևածագ
Ու տանում են դեպի ոլորտն Աստծո
Ըմբոստացումն հայոց
Ու համբարձումն հայոց... :[1]

(«Զվարթնոց»):

Զվարթնոցի ամենն մի քար բանաստեղծը քնութագրում է որպես անանց հավատ, իսկ Զվարթնոցը՝ »Իբրև մի սրբատաշ, բյուրեղ Մասիս«: Դավթյանի խոհերում ու մտապատկերներում Հայոց աշխարհի կոթողները ներկայանում են որպես հայոց աստենա-

[1] Վ.Դավթյան. «Ծուխ ծխանի», «Հայաստան», 1969, էջ 56-57

[2] Նույն տեղում, էջ 56-57

[1] Նույն տեղում, էջ 77

մերձ լեռների շարունակություն, դառնում երփնեռանգ և աստվածային նաիրյան խճանկարի անբաժանելի մասունքներ, ինչպես բանաստեղծն է հաստատում. «Զվարթնոցն է կանգնել Մասսի դիմաց իբրև մի սրբատաշ, թյուրեղ Մասիս...»:

«Զվարթնոց» ասքում Դավթյանը հայրենասիրության գաղափարը առաջին հերթին մարմնավորում է հայ մարդու արարման խնջանքի մեջ՝ որպես վայելք, որպես վսեմ պարգև: Հայ մարդու աբարող մտքի թռափը նախանձ է առաջացնում անգամ Հռոմի կայսեր սրտում: Ասքի այուժետային գլխավոր գիծը դրամատիկական լիցքեր է ձեռք բերում: Մի կողմից հայրենասեր Հովնանն է հառնում, մյուս կողմում՝ բյուզանդական կոստանդինոս կայսրը՝ նենգությամբ ու չար նախանձով բռնկված: Հովնանը փայփայում է ազգային արժանապատվության զգացումը, որ Զվարթնոցը ավելի շքեղ է, քան Սոֆիայի տաճարը: Դրամատիզմը նոր լիցքավորում է ստանում կայսեր խարդախության պատճառով: Նա որոճում է Հովնանին կ Պոլիս տեղափոխելու միտքը, որպեսզի նրա «Հանճարը Բյուզանդիոնում... առավե՞լս շողա»: Հովնանին ստիպում են գնալ Բյուզանդիա: Վ.Դավթյանը հայրենի երկրի հանդեպ եղած մարդկային կարոտի այրող կրակն է պատկերում հայ ճարտարապետի հոգում: Այդ կարոտը իմաստնացած խոհ է.. գոյատևման պատգամ՝ ծիածանված անցյալից-գալիք: Ճարտարապետ Հովնանի մենախոսության մեջ ահա այդ ծիածանն է խոսում.

Հո՞ղը,... Հայոց հողը... Ամբողջովին
Ոգի է նա, լույսով շաղված աճյուն,
Նա մայրական բուրմունք
Ու մանկության բուրմունք
Ու բուրմունք է հացի...
Նա տուն է ու կրակ,
Աղոթք է ու գինի,
Նա ծնանի ծուխ է բարձրագնա...
Հողը, Հայոց հողը, հայոց ոգին է նա.[1]

(«Զվարթնոց»):

Վ.Դավթյանը հերոսի այս ընդհանրացված իմաստությունը կրկին ու կրկին կապում է հայրենի խորհրդանիշ հանդիսացող լեռների, գետերի, աղբյուրների հետ: Հովնանի հոգու հետ խոսող հողը արտահայտություն է գտնում Արագածի, Կապույտ աղբյուրի, Մասիսի մետաֆորներով: Հովնանի վեհությունը երկնային պարգև չէ, այլ հայրենի լեռներից ժառանգած հոգևոր սնունդ: Դավթյանի հերոսը ինքն է խոստանում «Եվ դու տվիր, Մասիս, ինձ վեհությունդ պարգ... Հայոց ոգու խորհուրդն անմեկնելի, Հայոց արևաբամվող, խաչվող, բամվող, գամվող, Հայոց մեռնող Սակայն հրաշքի պես հառնող Ոգու խորհուրդը պարգ»:

Դավթյանի բանաստեղծական ընդհանրացումների մեջ ժողովրդի կենսափիլիսոփայությունն է ծփում՝ հաստատելով հայոց ոգու անմահությունը Զվարթնոցի մեջ, որը և՝ ըմբռնտացում է, և՝ համբարձում: Հովնանը որպես հայ ժողովրդի արարող հանճարի մարմնացում, կրկնակի է գեղեցկացնում հայրենիքի հանդեպ ունեցած կարոտի կանթեղով: Հենց այդ սերն է, որ նրան հնեռ է պահում օտարին ծառայելու մտքից: Հովնանը այդ մասին չի խոսում: Ասքի վերջին պատկերներն են ընթերցողին հուշում և՝ Հովնանի ցավը, և՝ հայոց աշխարհի դեմ շարունակվող ասպատակությունների շարանը.

Շուրջը օտար դաշտեր, հողմ է ու ծլուն,
Օտար հողմը նրան ընդառնն առած,
Տանում է աշխարհով, ո՞ւր է տանում...
... Հողմի ռնգոցներում շունչն է մահի,
Իսկ ճանապարհին անվերջ ձգվում է դեռ
Ու գալարվում այրող ծլունատիզով:
Հետո հողմի ալիքն իբրև պատանք
Պարուրում է նրան ու հեռերը ջնջում:
Իսկ սանձակոծ հողմը դեռ վրնջում,
Ասպատակում է դեռ...[2]

(«Զվարթնոց»):

Վ. Դավթյանի հայրենասիրական երկերի մեջ առանձնակի տեղ է գրավում «Ծիրանի ծառ» չափածո դրաման: Հեղինակը նրանում ներկայացնում է միջնադարի իրադարձությունները: Ծիրանի ճյուղակոտոր ծառը Հայոց աշխարհի, հայ ժողովրդի խորհրդանիշն է, որի շուքի տակ և շուրջ քանաստեղծը ներկայացնում է պատմական իրադարձությունները՝ կապված Անիի ճակատագրի հետ: Քնարվբեի, Խուշուշի, Արամանյակի, Աղամոսի, Սիմեոնի, Վանահոր, Թուխծամի, հույն Սպայի կերպարների միջոցով Վ.Դավթյանը քննարկում է հայրենիքի և ժողովրդի ճակատագրի պրոբլեմը՝ կրկին ուշադրություն դարձնելով անցյալի հերոսական և ողբերգական էջերին: Պատմությունից հայտնի է, որ Անիի թագավոր Գագիկ I-ին մահից հետո գահակալական կռիվներ են ծագում նրա երկու որդիների միջև: Թագավորի ավագ որդին՝ Հովհաննես Սմբատը, ժառանգում է հոր գահը՝ երկրի մի մասը տրամադրելով կրտսեր եղբորը՝ Աշոտին: Երկիրը թուլանում է: Բյուզանդական կայսրությունը օգտվելով դրանից, թուլական Հովհաննես Սմբատի հետ կնքում է պայմանագիր-կտակ, ըստ որի Սմբատի մահից հետո Անիի թագավորությունը պիտի անցնի բյուզանդական կայսրության լծի տակ: Այդ խայտառակ համաձայնագրին նպաստել են ժամանակի հայոց Պետրոս կաթողիկոսը և Վեստ Սարգիսը:

1930-ական թվականներին պատմական այս ցավալի փաստի հիման վրա Դ.Դեմիրճյանը գրեց »Երկիր հայրենի« պիեսը: Վ.Դավթյանի չափածո դրամաս նս վերաբերում է մեր պատմության այդ ողբերգական ժամանակաշրջանին: Սակայն եթե Դեմիրճյանը նկարագրում է պատմական իրադարձու-

[1] Նույն տեղում, էջ 89

[2] Նույն տեղում, էջ 95

թյունները, ապա Դավթյանը քննարկում է այդ խայտառակ կտակի հետևանքը: Հովհաննես Սմբատի մահից (1041թ.) հետո, կյանքից հեռանում է նաև Աշոտը: Թագավորության դավաճան ուժերը՝ կաթողիկոս Պետրոսը և Վեստ Մարգիսը, աշխուժանում են: Ժողովուրդը չի հաշտվում երևույթի հետ: Սպարապետ Վահրամ Պահլավունին ղեկավարում է ժողովրդական ըմբոստությունը: Թագավոր նշանակված 16-ամյա Գագիկ Երկրորդը՝ Աշոտի որդին, կազմակերպում է աննահանջ պայքար և՛ բյուզանդական, և՛ սելջուկյան հրոսակների դեմ՝ միաժամանակ մարտնչելով կենտրոնախույս ուժերի դեմ: Դեմիրճյանը, տես, նկարագրել է Գագիկ Երկրորդի իշխանության գլուխ անցնելն ու նրա կազմակերպած պայքարը: Դեմիրճյանին շարունակել է Վ.Դավթյանը: Ճիշտ է, «Միրանի ծառ» դրամայում ուժեղ և սրընթաց բախումներ չկան, սակայն բանաստեղծին հաջողվել է պատկերել ժամանակաշրջանի մարդկանց հոգու խռովքն ու տագնապը: Հայրենիքի և ժողովրդի միաձույլ հասկացության նկարագրությամբ Դավթյանը նախ ընդգծում է այն տագնապը, որ ապրել է ժողովուրդը, որի անունից դրամայում հանդես է գալիս գուսանը.

Մուրբ արևագալ, օգնական ինձ լիր,
Որ ես կարենամ ճշմարիտ խոսքով
Սև դրքը հյուսել Անի քաղաքի
Եվ գովքը հյուսել քաջ Պահլավունու...[1]

(«Միրանի ծառ»):

Նկատելի է Վ. Դավթյանի մտահղացման երկպլան ընթացքը՝ պատկերել և՛ Անի քաղաքի ողբերգական վիճակը, և՛ միաժամանակ ներկայացնել ժողովրդի և նրա քաջ գավակների հերոսական պայքարը՝ հայրենիքի հավերժությունն ապահովելու ուղղությամբ:

Դավթյանը չի սքողում Հայաստանի անմխիթար վիճակը՝ կապված Անին արծաթով ծախելու հետ: Նա Անիի և Հիսուսի ճակատագիրը համարում է նույնատիպ: Դրամայի սյուժեի երկրորդական գծի վրա բանաստեղծը ներկայացնում է գինետան աշխատակցուհի Խուշուշի, առևտրական Սիմավոնի, ալթիմիկ Աղամոսի, ինչպես նաև Թուխ-ծամի փոխհարաբերությունները, սակայն գաղափարական հիմնական ուղղվածության նկատմամբ Անիի թագավորության ճակատագիրն է: Սյուժեի ծանրությունը կարգալուծված Աղամոսի ուսերին է: Նա տիրապետում է ժամանակի գիտության գաղտնիքներին, կարողանում է քիմիական ռեակցիաների օգնությամբ պղնձից ստանալ ոսկի, նրագում է իր ստացած ոսկու միջոցով գումարել հայոց ցրիվ գտրը, գինել լեռնականների գնդերը և այդ հեղեղը բաց թողնել «Հռոմաց վրա».

Ոսկով կխգկեմ
Ես հռոմների կոկորդը ագահ
Եվ ոսկի շղթա կդնեմ նրանց
Զորավարների ագահ ձեռքերին,
Եռ կառնեմ Անին, եռ կառնեմ հողը...[2]

Վ. Դավթյանը դրամայում քայլ առ քայլ բացում է իր հերոսների հոգու դռները, բնութագրում նրանց՝ կոնկրետ արարքների միջոցով՝ ստեղծելով հայրենասիրական մի հիանալի պատում: Երկի վերջին մասերում երևան է բերվում Սիմավոնի դավաճանությունը: Նա Աղամոսի ոսկի ստանալու գաղտնիքը հայտնում է հռոմներին, Մոնմախոս կայսրը հրոսակների գունդ գումարելով՝ Իսիտաս զորավարի գլխավորությամբ ուղարկում է Հայաստան: Բոլոր փորձերը՝ Աղամոսին գերելու և Բյուզանդիա տանելու ուղղությամբ անցնում են ապարդյուն: Դրամայի վերջին գործողության մեջ հեղինակը անդրադառնում է Գագիկ արքայի Բյուզանդիոն գնալուն ու պատանդվելուն, ապա Պահլավունու գլխավորությամբ վերջին հերոսական կռիվներին: Բյուզանդական սպան վերջին ճիգերն է գործադրում Աղամոսին առանձնելու: Աղամոսը իր գյուտը թշնամուն չհանձնելու նպատակով ժայռից իրեն նետում է անդունդը: Դրամայի ավարտում Դավթյանը ընդգծում է հայրենիքի ճակատագրի հանդեպ իր զեղագիտական իդեալը: Պատանի Արամանյակի շուրթերով հնչում է խարազանող խոսքը դավաճանների հանդեպ.

Հորնքայր գուսան, ասա, վերջապես
Մեր հայոց ազգից դավաճանները
Ե՞րբ կվերանան.[3]

(«Միրանի ծառ»):

Ապա ներկայացվում է ծիրանի ծառը, որին փարվելով՝ Խուշուշը շշնջում է.

Միրանի իմ ծառ,
Իմ Աղամոսս, ծարավ ես, ծարավ...
Ու ես սափրորով միշտ ջուր կկրեմ
Մեր սպառ գնտակից, որ գովություն տամ
Քարի մեջ խրված քո արմատներին...
Միրանի իմ ծառ, ծիրանի իմ ծառ,
Իմ Աղամոսս...[3]

(«Միրանի ծառ»):

Վ.Դավթյանը հայրենիքի պատվի, հարատևման ընթացքը կապում է անձնուրաց հայրենասերների սխրանքների հետ: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս միաձույլ է հանդես բերվում Միրանի ծառ՝ Հայաստանի և հերոս Աղամոսի պատկերը:

Վ.Դավթյանը հայ ժողովրդի պատմական ընթացքի մեջ բարձր է գնահատել հայ մշակույթի անմահ գործիչների դերը: Բնական է, որ նա ժառանգորդի սիրով զրույց է բացել Մ.Մաշտոցի, Գ.Նարեկացու, Մոմիկի հետ, հյուսել երևույթների իր գրական խոսքը՝ նվիրված ժողովրդի հանճարի մարմնացում հանդիսացող այդ ռահվիրաներին:

---

[1] Վ.Դավթյան, «Կապույտ գիրք», «Սովետական գրող», 1978, էջ 185

[1] Նույն տեղում, էջ 230

[2] Նույն տեղում, էջ 317

[3] Նույն տեղում, էջ 317

Վ.Դավթյանի «Թռնդրակեցիներ» դրաման ժամանակին բարձր է գնահատվել, սակայն այսօր վերագնահատվում է այն, որովհետև վերաարժեքավորվում է նաև թռնդրակյան շարժումը, որի առաջնորդը եղել Սմբատ Զարեհավանցին: Ժամանակին մեծանուն Մ.Աբեղյանը թռնդրակյան շարժումը համարել է ծայրահեղության հասած երևույթ: Բայց խորհրդային տարիներին այն գնահատվել է որպես գյուղացիական առաջավոր պայքար, իսկ Զարեհավանցուն վերագրվել է ժողովրդական առաջնորդի իմաստություն: Այդ ոգով էլ ստեղծվել է Սմբատ Զարեհավանցու կերպարը: Վերանայելով պատմությունը, դրվում է նաև նման երկերի վերագնահատման հարցը: Այս փոքրածավալ հոդվածում հնարավոր չէ հանդամանորեն քննարկել այդ խնդիրը:

Բանաստեղծ-գրականագետ Վ.Հակոբյանը, որ ուսումնասիրել է Վ.Դավթյանի պոեզիան, գրել է. «Ընթերցելով Վ.Դավթյանի պատմական թեմատիկայով գրված գործերը, մտածում ես, որ, հիրավի, պետք է անպայման մեր ժողովրդի հարուստ պատմության բոլոր էջերը գեղարվեստական մարմնացում ստանան՝ ավելի գործուն ազդեցության և դասի համար»[1]: Չես կարող չհամաձայնվել նման կարծիքին:

Պատմության դասերը Վ.Դավթյանի պոեզիայում
Ս.Ա.Խաչատրյան
Ամփոփում

Քննարկելով Վ.Դավթյանի պատմական թեմայով գրված պոեմները, ասքերն ու «Ծիրանի ծառ» չափածո դրաման, եկել ենք հետևյալ եզրահանգման.

1.Հայ պոեզիայում ետչարենցյան շրջանի բանաստեղծների շարքում Վ.Դավթյանը առաջիններից մեկն էր, որ լուրջ ուշադրություն դարձրեց հայ ժողովրդի պատմության հնօրյա հերոսական և ողբերգական դրվագների գեղարվեստական պատկերմանը:

2.Վ.Դավթյանը վարպետորեն փառաբանեց հայ ժողովրդի հատկապես հերոսական դրվագները, օտար բռնակալների դեմ մղած ազատագրական պայքարը՝ այն համարելով նրա կենսունակության հիմնական պայմանը:

3.Ելնելով իր ստեղծագործական խառնվածքից, Վ.Դավթյանը նախընտրեց առասպելական-հերիաթային-ասքային պատումների հնարարանքներն ու առանձնահատկությունները:

4.Բանաստեղծը գեղարվեստական դրական կերպարների աստիճանին է հասցրել պատմական անձնավորություններին՝ Արա Գեղեցիկին, Արտավազդին, Մ.Մաշտոցին, Գագիկ Երկրորդին և այլոց, ինչպես նաև ստեղծել է Շապուհ Արքայի, Վնստ Սարգսի, Պետրոս Գետադարձի և ուրիշների բացասական կերպարները:

5.Իր ստեղծագործություններում Վ.Դավթյանը պատմական անցյալին հաղորդել է արդիական հնչեղություն՝ հանուն ապագայի:

Уроки истории в поемах и сказаниях В.Давтяна
Ханян С.А.
Резюме

В статье разбираются и оцениваются поэма "Песня об Армении", исторические сказания "Дайте мне дым очага", "Комитас", "Звартноц", "Сказания о Маштоце", "Белый всадник", драма в стихах "Абрикосовые деревья", в которых талантливый поэт по велению современности художественным словом оценивает историческое прошлое народа.

Статья является серьезной попыткой переоценки исторических произведений знаменитого поэта.

---

[1] Վ.Հակոբյան, «Բանաստեղծությունը և տիեզերական շարժումը», 2000, էջ 129: